Օգոստոսի 1-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 10 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող Էոռնեկայան վարժարանի շինարարական աշխատանքների համար ամրանների մատակարարման ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության Կովկասի բնության հիմնադրամի կողմից «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի, «Զանգեզուր» կենսաոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում 2014 թվականին ֆինանսավորվող ծրագրերը.

«Նեոնատալ բժշկության Հայկական ասոցացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նորածնային վերակենդանացման դասընթացներ» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասում երկու խաղահրապարակի տեղադրման, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիք, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի 160 համայնքների երեխաների համար ամառային ճամբարի կազմակերպման, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա, Ճոճկան ու Քարինջ համայնքներին շինարարական նյութերի մատակարարման և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի հանրային այգու բարեկարգման ու բազմաֆունկցիոնալ սպորտային հրապարակի կառուցման ծրագրերը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կարի կենտրոն կանանց համար» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ ու բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: